

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

Ս . ՏԵՂԵԱՅ ԱԻԱՆԳԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս գլուխին տակ պիտի դնենք մեր մատենագրութեան մէջ գտնուած այն հատուկօտոր գրուածքները որ կը վերաբերին Ս . Տեղեաց աւանդական շինութիւններու . նոյնութեամբ կը դնենք զանոնք, առանց մեր կողմէ ո՛ր և է քննաբանական խօսք մը ընելու, նկատելով զանոնք իբր նուիրական աւանդութիւններ մեր նախնի հայ քրիստոնեաներու :

* * *

1. Հայոց Աբգար քաղաւորի կնոջ Հեղինէի Երուսաղեմ գալը, Ս . Տեղեաց եկեղեցիներու շինութիւնները, անոր մահը եւ գերեզմանը (Ա . դար) . — Հաճնոյ Ս . Յակոբ Մծբնայ հայրապետի վանքին մէջ գտնուած է մագաղաթէ հայերէն ձեռագիր տետրակ մը որ թարգմանուած է ասորերէնէ «յաւուրս Գրիգորի Մագիստրոսի, եւ որդոյն անոր Գրիգորի Վկայասեի, որ Է Վանրամ, ի ֆաղսն Սիս»՝ ուր կը կարդացուի հետեւեալ հատուածը . «Մամենաբարեպաշտ եւ զթածասիրտ մեծ թագուհին Հեղինէ կինն Աբգարու թագաւորին մերոյ և Ասորոց, հրաժարեալ յամենայնէ, և ի բաց լքեալ թողեալ զփառս վայելչութեան պետութեան իւրոյ և աշխարհի, գնաց յԵրուսաղէմ յամի տեառն քառասուն և երկու, յսկիզբն ամսոյն Մայիսի : Եւ էր յԵրուսաղէմ և ի սահմանս նորա սով մեծ, վասն որոյ